ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 2. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

1

Գետի ակունքներում տեղացող հորդառատ անձրևների հետևանքով, ամեն ամառ Նեղոսը վարարում էր, ափերից դուրս գալիս և իր բերած տիղմով պարարտացնում Եգիպտոսի ափամերձ տարածքները: Այստեղ աճում էին պտղատու ծառեր, հացաբույսեր, կային բազմապիսի թռչուններ և կենդանիներ: Գետի ջրերը հարուստ էին ձկներով: Նեղոսը նաև երկրի մարզերը իրար կապող հիմնական ճանապարհն էր: Պատահական չէ, որ հույն պատմիչ Հերոդոտը Եգիպտոսն անվանել է ***«Նեղոսի պարգև»***:

Նեղոսը փառաբանող հին եգիպտական հիմնը

Փառք քեզ, Նեղոս,
Գալիս ես, որ կենդանացնես Եգիպտոսը:
Թե դանդաղում ես, դադարում է կյանքը:
Թե զայրանում ես, աղետ է տիրում ամբողջ երկիրը:
Թե մեծ, թե փոքր աղքատանում են:
Իսկ երբ բարձրանում ես՝ հրճվում է հողը:
Եվ բերկրանք է ապրում ողջ բնությունը:
Դու հաց ես տալիս և առատ սնունդ,
Ամեն մի լավ բան դու ես ստեղծում:
Հրճվում են քեզնով զավակները քո,
Ողջունում են քեզ՝ իբրև արքայի:

2

Երկրի միավորումը նպաստեց տնտեսության վերելքին, հնարավորություն տվեց ամբողջ բնակչության ուժերով կառուցել ոռոգման միասնական համակարգ: Նախկինում անմշակ հողերը այժմ ոռոգվում էին Նեղոսի ջրերով և ավելի առատ բերք էր ստացվում: Աճեց բնակչության թվաքանակը: Զարգացան բանջարաբուծությունը, այգեգործությունը, խաղողագործությունը և մեղվաբուծությունը:

3

Ամենից խոշոր բուրգերը կառուցվել են Ք.ծ.ա. մոտավորապես 2600 թ. և կանգուն են առայսօր: Բուրգը դամբարան էր, որի մեջ թաղում էին մեռած փարավոնին: Ամենամեծ բուրգը կառուցել է ***Քեոփսը,*** մայրաքաղաք Մեմֆիսի մոտ: Բուրգի բարձրությունը 147 մ է: Կառուցման համար օգտագործվել է 2 մլն 300 հազար հղկված քար, որոնցից յուրաքանչյուրն ուներ երկու տոննա քաշ: Բուրգի յուրաքանչյուր կողմի երկարությունը կազմում է 233 մ: Նեղ մուտքը տանում է դեպի բուրգի խորքը, դեպի թաղման սենյակը, ուր դրված էր փարավոնի մումիան և բազմաթիվ թանկարժեք առարկաներ: Քեոփսի, ինչպես նաև մյուս բուրգերը թալանվել են դեռևս հնում:

Բուրգերի հարևանությամբ է գտնվում փարավոնների պատվին կառուցված մեկ այլ վիթխարի հուշարձան՝ ***Մեծ Սֆինքսը***: Սֆինքսը մի ամբողջ ժայռից քանդակված, մարդու գլխով և առյուծի մարմնով վիթխարի արձան է: Արձանի բարձրությունը 20 մ է, իսկ երկարությունը՝ 75 մ:

4

Արշավանքներից և նվաճված երկրների շահագործումից հարստանում էր հիմնականում իշխող վերնախավը: Հասարակ եգիպտացիները առաջվա նման ստիպված էին ծանր հարկեր վճարել պետությանը, մասնակցել փարավոնի արշավանքներին և անվճար աշխատանք կատարել արքայական և տաճարային տնտեսություններում: Երկրում գնալով սրվում էր սոցիալական դժգոհությունը:

5

Գիտնականները հիքսոսների կողմից Եգիպտոսի հեշտ նվաճումը բացատրում են ևս երկու հանգամանքով. հիքսոսներն ունեին ***ձիեր լծած մարտակառքեր***, որոնք եգիպտացիներին անծանոթ էին և սարսափ էին առաջացնում, բացի այդ, հիքսոսները զինված էին ***երկաթե զենքերով***, որոնք ավելի թեթև և ամուր էին եգիպտացիների բրոնզե զենքերից:

«Փոթորկի պես փլվեցին Եգիպտոսի վրա հյուսիսային նվաճողների երկաթապատ, սրընթաց մարտակառքերը: Կայծակում էին նրանց անողոք թրերը՝ մոմի պես հատելով փարավոնի ընտիր վաշտերի զրահները, փոշիացնելով աշխարհի լավագույն՝ եգիպտական գնդերը: Կառավարների անխոցելի զրահները, նետերի երկաթյա ամենահաս սլաքները սարսափի էին մատնել եգիպտացիներին: Եգիպտոսում մինչ այդ չտեսնված վիթխարի, մոլեգին ձիերը սմբակներով կոխկրտում, ցրիվ էին տալիս եգիպտական նշանավոր հետևակ զորքը: Ամեն ինչ ոչնչանում, փլուզվում էր այդ, հիրավի, անկասելի տարերքի ճնշման տակ: Ընկավ Եգիպտոսը, փարավոնն իր բանակի հետ զոհվեց Սինայի անապատում: Երկիրն անցավ հիքսոսների ձեռքը»: